

Ս. Հ. Շալոյան

ԿՈՐՅՈՒՆԻ «ՎԱՐՔ ՄԱՇՏՈՑԻ» ԳՐՔԻ ԵՎ «ՍԵՂԵՍՏՐՈՍԻ ՎԱՐՔԻ»
ԱՌՆՋՈՒԹՅՈՒՆԸ

(Մ. ԽՈՐԵՆԱՑՈՒ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋԸ)

Կորյունի գրքում վերջերս ինձ հանդիպեց մի երկու տող, որոնց նմանը գտնվում է նաև «Սեղրեստրոսի վարքի» համառոտ խմբագրության մեջ:
Կորյունը Մաշտոցի մասին գրում է.

«Եւ զամենայն ոգի քրիստոսազգեստ և հոգեղէն վառեաց, և բազում բանդականաց և կալանաւորաց և տագնապելոց ի բռնաւորաց թողութիւն արարեալ՝ կորզելով զնոսա ահաւոր զօրութեամբն Քրիստոսի: Եւ բազում մուրեակս անխաւաքեան պատառեաց»¹:

Իսկ «Սեղրեստրոսի վարքի» համառոտ խմբագրության մեջ կարդում ենք, որ Սեղրեստրոս եպիսկոպոսը Կոստանդինոս կայսրին թելադրում է կատարել՝

«Հարկաց թողութիւն, և ողորմութիւն առ կարօտեալս, և գութ առ տնանկս, և սրբութիւն ախտից մարմնականաց, բանտականաց և կալանաւորաց արձակումն. պարտականաց թողութիւն, և ամենայն վտանգելոց այցելութիւն ի դատաւորաց...»²:

Ինչպես տեսնում ենք, երկու հատվածներում էլ իմ կողմից ընդգրծված տողերի միտքը, տեղ-տեղ նաև բառերն ու նախադասությունները կատարելապես նման են իրար:

Կորյունի և Սեղրեստրոսի վարքի այս հատվածների նմանությունը, որ առաջին անգամ իմ կողմից է երևան բերվում, հաստատում է այն հանգամանքը, թե Սեղրեստրոսի ընդարձակ վարքի համառոտողն ապրելով Կորյունից ժամանակով ավելի ուշ, վերջինիս գիրքն օգտագործել է իր կատարած խմբագրության համար:

Սակայն կարող է հարց ծագել, թե գուցե Սեղրեստրոսի ընդարձակ վարքում կան վերոհիշյալ բառերն ու նախադասությունները, որոնք վերցրել է համառոտողը, առանց Կորյունի հետ որևէ գործ ունենալու:

Այդպիսի ենթադրության առիթ չտալու համար, բերում եմ այստեղ Սեղրեստրոսի վարքի թե՛ ընդարձակի և թե՛ համառոտի հատվածները.

¹ «Վարք Մաշտոցի», Երևան, 1941 թ., էջ 78—80: Այս և հետագա ընդգծումներն իմն են Ս. Շ.:

² «Սոկրատայ Սջուստիկոսի Եկեղեցական պատմութիւն և Պատմութիւն վարուց քրդոյն Սեղրեստրոսի եպիսկոպոսի Հռովմայ», Վաղարշապատ, 1897 թ., էջ 733:

Սեղբեստրոսի ընդարձակ վարքը

«Եւ որոց պարտին հարկս արքունեաց և ոչ ունիցին հատուցանել, թողութիւն արա. զկապեալս արձակեալ, զորս յարտաք-ասանմանութեան և ի մետաղսն դժնդակս և ի բոլոր նեղութիւնս տանջեալս հեշտութիւն շնորհեա, պատուէրս և ողորմութիւնս առնել հրամայեա. պարգևս խնդրողացն զիրաւունս շնորհեա, որպէս զի զայս ուղղապէս և ըստ կարգի եղեալ զխաղաղոյն արս ոմանս կարգեա» (էջ 733):

Այս մեջբերումների համադրությունից պարզվում է, որ համառոտողն ընդհանրապես հետևել է ընդարձակին, վերցնելով նրա արտահայտություններն ու մտքերը: Բայց որ համառոտողն իր շարադրության ընթացքում միաժամանակ հորյունից վերցրել է նրա բառերը, այդ մասին ևս, ըստ իս, ոչ մի կասկած չի կարող լինել:

Սակայն, այն հանգամանքը, որ Մեսրոպի և Սեղբեստրոսի վարքաբանությունների որոշ կետերում մտքերի այսպիսի նմանություններ կան, իսկ այդ բանը պատահական չէր կարող լինել, ինձ թեկզբեց բաղդատու-թյան դնել հորյունը Սեղբեստրոսի ընդարձակ վարքի հետ:

Ահա տյո՛ղ հատվածները.

Ընդարձակ Սեղբեստրոս

«Եւ այնժամ Սիղբեստրոս ասէ. ի շաբաթում յայսմ պահեա և բացաբեա գծիրանիսդ. մուտ ի սենեակ քո, ե անդ արտադրեա դայն, ընկեա զքեզ ինքն ի վերայ քրձի, և աղաչեա արտասուաք ե լալով գՏէր Աստուած...»

Եւ որոց պարտին հարկս արքունեաց և ոչ ունիցին հատուցանել, թողութիւն արա, զկապեալս արձակեալ, զորս յարտաքսասանմանութեան և ի մետաղսն դժնդակ և ի բոլոր նեղութիւնս ասնջեալ հեշտութիւն շնորհեա, պատուէրս և ողորմութիւնս առնել հրամայեա, պարգևս խնդրողացն զիրաւունս շնորհեա, որպէս զի զայս ուղղապէս և ըստ կարգի եղեալ զխաղաղոյն արս ոմանս կարգեա» (էջ 732):

Այս երկու մեջբերումները բաժանելով ըստ իրենց բովանդակության, ստանում ենք հետևյալ պատկերը.

Սեղբեստրոս եպիսկոպոսը Դոստանդիանոս կայսրին հորդորում է.

1. Ծիրանին հանել, քրձի վրա ընկնել, լալով և արտասվելով աղաչել աստծուն, ուրիշ խոսքով՝ ապաշխարել:

Սեղբեստրոսի համառոտ վարքը

«...և հարկաց թողութիւն, և ողորմութիւն առ կարօտեալս, և գութ առ տնանկս, և սրբութիւն ախտից մարմնականաց, բանտականաց և կալանաւորաց արձակումն, պարտականաց թողութիւն, և ամենայն վանքելոց այցելութիւն ի դատաւորաց ի միասին ամենեցուն ամենայն անիրաւութեան իրաւունք ի քէն»:

Կորյուն

«Եւ զամենայն ոգի քրիստոսազգեստ և հոգեղէն վառեաց, և բազում բանդականաց և կալանաւորաց և տագնապելոց ի բռնաւորաց թողութիւն արարեալ, կորզելով զնոսա ահաւոր զօրութեամբն Քրիստոսի: Եւ բազում մուքհակս անիրաւութեան պառնեաց»:

Մաշտոցը, առանց որեէ մեկի կողմից թելադրանք ստանալով՝

«Ամեն մարդու զարդարեց Քրիստոսի զգեստով ու հոգեպէս»¹. այսինքն՝ հորդորեց քրիստոնյային վայել կյանք ունենալ:

¹ «Վարք Մաշտոցի», էջ 79—81:

2. Հարկապարտների պարտքը ներել, աքսորվածներին, բանտարկվածներին և նեղություն մեջ գտնվողներին ազատություն շնորհել:

Շատ բանտարկյալների ու բռնակալներից նեղվողների ազատեց և անարդար պարտամուհակները պատռեց:

Ինչպես տեսնում ենք, մտքերը, նույնիսկ դրանց հաջորդականությունը, նույնն են թե՛ Սեղրեստրոսի ընդարձակ վարքում և թե՛ Կորյուկնի գրքում: Եղևությունների այսպիսի նմանությունը կարող էր գոյություն ունենալ միայն այն պարագային, երբ Կորյուկնն էլ Սեղրեստրոսի վարքը դրեք: Բայց այստեղ անձնավորությունները տարբեր են, հետևաբար և նրանց վարքի նկարագրությունները չէին կարող այսչափ իրար նմանվել:

Սրանից իսկ, իմ կարծիքով, կարելի է հանել միայն մի եղրակացություն— Կորյուկնը, իր գիրքը գրելիս, նկատի է ունեցել Սեղրեստրոսի ընդարձակ վարքը և այն օգտագործել է Մեսրոպի վարքի համար, արտահայտելով նույն մտքերը, սակայն սեղմ և տարբեր բառերով:

Վերոհիշյալ փաստը ցույց է տալիս նաև, որ Մեսրոպի վարքը գրվելու ժամանակ, Սեղրեստրոսի ընդարձակ վարքն արդեն թարգմանվում էր կամ թարգմանված էր Սահակի և Մեսրոպի ավագ աշակերտների, որոնց թվում, անկասկած, նաև Կորյուկնի ձեռքով: Այս հանգամանքը ես ուզում եմ օգտագործել ի նպաստ խորենացու:

Հայտնի է, որ Մեծ և Փոքր Սովրատներից և Սեղրեստրոսներից խորենացու օգտվելու խնդիրն առաջին անգամ, շատ որոշակի կերպով, արժարծեց Փրանսիացի գիտնական Կարիերը 1892—1893 թ.թ. «Հանդէս ամսօրեայ»-ում: Այս հարցը ծավալուն վիճարանությունների և ուսումնասիրությունների նյութ դարձավ հայ պարբերական մամուլի և օրագրության համար: Վիճարանություններին մասնակցում էին խալաթյանը, Ն. Մառը, Բարսեղ Սարգսյանը, Ն. Բուզանդացին, Ս. Մալխասյանը և ուրիշները: Գրական տյոգ պայքարն ուժեղ էր հատկապես այն պատճառով, որ Կարիերի և նրա կողմնակիցների եղրակացություններով՝ խորենացին դադարում էր V դարի մատենագիր լինելուց և տարվում էր VIII դարը, անգամ ավելի ուշ ժամանակներ¹:

Վիճարանությունները տևեցին մինչև 1897 թ., երբ Գալուստ Տեր-Մկրտչյանը (Միաբան) Մեսրոպ Տեր-Մովսիսյանի հրատարակած Սեղրեստրոսի ընդարձակ վարքից մի հատված ցույց տվեց (էջ 699), որը բառացիորեն գտնվում է խորենացու Հայոց պատմության մեջ՝ օգտագործված Մեսրոպի կենսագրության համար:

Այդ գյուտի հետևանքով՝ Միաբանը, հիմնվելով Սովրատի և Սեղրեստրոսի հայերեն թարգմանություններում եղած թվականի վրա, վերջնականապես որոշեց, որ խորենացին 678 թվից հետո ապրող մատենագիր է եղել²:

Թեև Միաբանի այս որոշման դեմ էլ խոսողներ եղան, բայց նա դարձյալ պնդեց իր տեսակետի վրա, գրելով՝ «...խորենացին, ինչպես ես արդեն առիթ եմ ունեցել հայտնելու, 678 թվից հետո է...: Կոնիերերի „Byzant.

¹ Այս բոլորի մասին կարդալ Մ. Տեր-Մովսիսյանի հրատարակած «Սովրատ Սքուլաստիկի Եղևոցական պատմություն» աշխատության առաջաբանը:

² «Արարատ», 1897 թ., էջ 422—424:

Zell¹-ում¹ և Ն. Բուզանդացու «Մշակ»-ում գրածները ոչ մի կերպ չեն խախտում իմ ցույց տված հենակետը Խորենացու ժամանակի մասին²:

1902 թվականից հետո վիճաբանությունները տվյալ խնդրի շուրջը, որքան ինձ հայտնի է, դադարեցին և հարցն էլ այդպես փակվեց:

Սակայն վերոհիշյալ ուսումնասիրությունների մեջ նկատելի է հատկապես այն հանդամանքը, որ Խորենացու ժամանակի որոշման կապակցությամբ, Կորյունը բնավ հաշվի չի առնվել³:

Արդ, եթե ըստ Միաբանի՝ Խորենացին 678 թվականից հետո ապրող մատենագիր է, որովհետև նրա գրքում Սեղբեստրոսի ընդարձակ վարքից մի հատված կա, ապա ներկայիս տեսնում ենք, որ նույն Սեղբեստրոսի ընդարձակ և համառոտ թարգմանություններում կան տողեր ու մտքեր, որոնց նմանները գտնվում են նաև Կորյունի գրքում:

Բայց որովհետև չի կարելի Կորյունին իր գրքից տեղահան անել, հետևաբար պիտի բնորոշել, որ Սեղբեստրոսի ընդարձակ վարքն ավելի առաջ է թարգմանվել (V դարում), քան 678 թվականը, որով Միաբանի որոշումը Խորենացու ժամանակի մասին ինքնին կորցնում է իր ուժը:

Նգրակացություն.— Կորյունը և Խորենացին V դարի մատենագիրներ են. Մեսրոպ Մաշտոցի պատմությունը գրելու համար նրանցից յուրաքանչյուրն իր ցանկացած ձևով օգտագործել է Սեղբեստրոսի ընդարձակ վարքը՝ Խորենացին մի հատված բառացի է արտադրել, իսկ Կորյունը մի այլ հատվածի մաքերն է վերցրել:

1942 թ. փետրվարի 1.

ՍՍՌԽ Գիտությունների Ակադեմիայի Հայկական ֆիլիալ
Պատմության և նյութական կուլտուրայի ինստիտուտ

¹ Տես նաև «Հանդէս ամսօրեայ», 1902 թ., էջ 1—6, 85, 129—132, 193 և 236:

² «Արարատ», 1902 թ., էջ 938, հատված 8:

³ Բարսեղ Սարգսյանը հայտնում է, որ Սոկրատից կորոնելը նաև Աղաթանգեղոսում (տես «Բաղմավէպ», 1893 թ., էջ 416, 451, 453—455, 497), ինչպես նաև Աղվանից Վաչագան թագավորին (V դար) Արարատ Մամիկոնների եպիսկոպոսի գրած նամակում (տես «Բաղմավէպ», 1899 թ., էջ 124—128 և 221—226, հատկապես վերջին տողերը):

Նորայր Բուզանդացին գրում է, որ Փոքր Սոկրատում տեղեր կան, որոնք համընկնում են Սեբեոսի, Նդիշեի, Խորենացու, Փարպեցու, Աղաթանգեղոսի և Հաճախապատում աշյու ու աշյու էջերի հատվածներին (տես «Հանդէս Ամսօրեայ», 1893 թ. Իսկ 1900 թ. հրատարակած «Կորին վարդապետ և նորին թարգմանութիւնը» խորագրով գրքում դարձյառ չինչ չկա Կորյունի և Սեղբեստրոսի առնչության մասին, և չէր էլ կարող լինել, որովհետև այդ աշխատության մեջ Կորյունը համեմատված է միայն Եփթաղի, Աղաթանգեղոսի և Փալատոս Բուզանդի հետ:

Сенекерим Шалджян

Связь „Жития Маштоца“ Корюна с „Житием Сильвестра“

(К проблеме Моисея Хоренского)

Р е з ю м е

В свое время французский ученый Карриер, основываясь на некоторые даты, встречаемые в „Житии Сильвестра“ и „Церковной истории“ Сократа Схоластика, доказывал, что Моисей Хоренский должен был жить не в V веке, а гораздо позже—в VIII или IX вв. Такого же мнения придерживался издатель полного и сокращенного армянских переводов „Жития Сильвестра“ и „Церковной истории“ Сократа—Галуст Тер-Мкртчян (Миабан). Ему удалось найти в „Житии Сильвестра“ отрывок, который дословно приводится в „Истории Арменнии“ Моисея Хоренского в главе, посвященной Маштоцу. Обнаружив эту связь, Миабан, на основании сохранившихся в указанных переводных памятниках дат, доказывал, что Моисей Хоренский мог жить после 678 года.

Против этого мнения выступили Норайр Бюзандаци и английский ученый Конибер. По мнению последнего, пространный армянский перевод „Жития Сильвестра“ и „Церковной истории“ Сократа был сделан в V веке, а краткий—в VIII в.

В последнее время автор данной статьи обнаружил в пространной редакции „Жития Сильвестра“ отрывок, содержание которого почти полностью использовано в „Житии Маштоца“ Корюна, время жизни и деятельности которого хорошо известно. Он жил в V веке.

Из сказанного с несомненностью следует, что пространная редакция „Жития Сильвестра“ на армянский язык была переведена в V веке учениками Саака и Месропа, каковым переводом и воспользовался Корюн при написании „Жития Маштоца“.

Таким образом, дата, предлагаемая Миабаном—678 год в качестве исходного пункта для датировки времени жизни Моисея Хоренского, теряет свою силу, поскольку доказывается, что указанные памятники переведены с греческого на армянский в V веке. В это именно время и мог заимствовать один из отрывков Моисей Хоренский для главы, посвященной Месропу Маштоцу.

S. H. Shaldjyan

*The connection of Corjun's "The life of Mashtotz" with
"The life of Sylvester"*

(On the problem of Moses of Khoren)

S u m m a r y

The French scholar Carrier having taken his grounds upon certain dates, which occur in "The life of Sylvester" and in the "Church History" of Socrates the Scholastic, had been demonstrating, in his own time, that Moses of Khoren must have been living not in the V century but much later—in the VIII or IX centuries. To the same opinion held the editor of the detailed and short Armenian version of "The life of Sylvester" and "Church History" of Socrates—Gaiust Ter-Mkrtchian (Miaban). He arrived at finding a fragment in "The life of Sylvester" which is verbally cited in "The History of Armenia" of Moses of Khoren, in the chapter dedicated to Mashtotz. Having discovered this connection, Miaban upon the accounts of the preserved in the pointed out translated memorials dates, had been giving a proof, that Moses of Khoren could have lived after the 678 year. Norajr Bjuzandatzy and the English scholar Coniber rose against this opinion. According to the views of the latter the detailed Armenian translation of "The life of Sylvester" and "Church History" of Socrates had been fulfilled in the V century, but those of the short ones were done in the VIII century.

Recently the author of this article discovered a fragment in the detailed version of "The life of Sylvester" the contents of which is almost entirely profited in "The life of Mashtotz" by Corjun, the time of whose life and work is well known. He lived in the V century.

Being beyond any doubt, it follows from the said, that the detailed version of "The life of Sylvester" had been translated into Armenian language by the disciples of Sahak and Mesrop, and that very version Corjun profited when writing "The life of Mashtotz".

Thus the date, the 678-th year, proposed by Miaban as the point of departure for dating the time of the life of Moses of Khoren, loses its credit as soon, as it gets set out, that the said memorials had been translated from Greek into Armenian language in the V century.

Just at that period could Moses of Khoren have borrowed one of the fragments for the chapter dedicated to Mesrop Mashtotz.